

«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳՄՏՕ) ծրագիր

ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ՀՀ բնապահպանության նախարարության ավտոմատ կառավարման կենտրոնական գլխամասային հանգույցի վերազինման համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով (NRB # 26/10/176-1)

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «ԳՄՏՕ»¹ ծրագիրը և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա» ընկերությունը հրավիրում են մասնագիտացված տեղական կազմակերպություններին գնառաջարկներ ներկայացնելու ՀՀ բնապահպանության նախարարության վերոնշյալ կարիքների համար համակարգչային սարքավորումների մատակարարման համար:

Պահանջվող ապրանքների ու ծառայությունների մասնագրերը և ծավալները, ինչպես նաև առաջարկվող գործարքի պայմանները ներկայացված են ստորև:

Ա. Պահանջվող ապրանքների նկարագիրը

1.

1	Սերվեր	Form-Factor	Rackmountable up to 2U
		CPU	2xCPU, each at least with 8 physical cores, 3.2GHz frequency, 24.75MB L3 cache, supporting 2666MT/s memory (Intel Gold 6134)
		RAM	8x16GB 2666Mhz
		HDD	3x300GB 15K for OS and 6x1.2TB 10K for DB
		PSU	2x800 Watt redundant hot-plug power supplies
		Support	3-year 24x7 case registration window, 4-hour response time, availability of at least 2 service-centers in Armenia mentioned at vendor's website
2	UPS		3000VA line line interactive single phase UPS with 3year warranty
3	OS		MS Windows 2012 Enterprise 64bit
4	Virtualization		VMWare vSphere Essential Kit

2.

#	Ապրանքի նկարագրությունը	Քանակ	Գինը առանց ԱՀՀ	Գինը ԱՀՀ-ով
	Ընդամենը			

¹ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիրն իրականացվում է «Մենդեզ Ինվեստմենթ Ընդ Ասոսիեյթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի կողմից: Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելեք <http://www.aspired.wadi-mea.com/> կայքը:

Բ. Որակը, ծագումը և երաշխիքները

Մատակարարված սարքավորումները պետք է համապատասխանեն ոլորտի առաջատար արտադրողների չափանիշներին: Այն է. արտադրողը՝ առնվազն վերջին երեք տարիների ընթացքում պետք է լինի սերվերների ուղղությամբ Գարթնեյի Magic Quadrant-ի առաջատարների ցանկում և IDC-ի սերվերների համաշխարհային վաճառքների վերաբերյալ հաշվետվությունների առաջատար եղակում: Դա ապացուցելու համար մատակարարը պետք է ներկայացնի մատակարարվող արտադրանքի որակի և ծագման համապատասխան սերտիֆիկատներ:

Գ. Գնառաջարկի ձևը, լրացուցիչ տեղեկությունները

Հետաքրքրված կազմակերպությունները (այսուհետ հայտատուները) պետք է ներկայացնեն իրենց գնային առաջարկությունները սույն հրավերի «Ա» բաժնի 2-րդ կետում ներկայացված աղյուսակային ֆորմատով:

Ցուրաքանչյուր ապրանքի և ծառայության համար ԱԱՀ-ն պետք է ներկայացվի գնից առանձին:

Աղյուսակից հետո հայտատուն պետք է նշի իր հայտի վավերականության շրջանը (այսինքն՝ մինչև երբ է ուժի մեջ իր կողմից ներկայացված հայտը) և պատվերի կատարման համար պահանջվող ժամանակահատվածը:

Լրացուցիչ տեղեկություններ

Բացի վերը նշված ֆորմատով ներկայացված գնառաջարկից, հայտատուն իր հայտում պետք է տրամադրի նաև հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1. արտադրողի արտոնագրման ձև (manufacturer authorization form),
2. ծագման փաստաթղթեր ապրանքների վերաբերյալ,
3. համառոտ տեղեկանք կազմակերպության պատմության և փորձի մասին,
4. առնվազն երեք խոշոր պատվիրատուների հեռախոսահամարները և հասցեները՝ հայտատուի մատուցած ծառայությունների վերաբերյալ կարծիք հարցնելու համար:

Դ. Հայտի ներկայացման ձևը, վայրը և վերջնաժամկետը

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և լրացուցիչ տեղեկությունները (տես «Գ» բաժինը), պետք է մինչև **2017 թ-ի նոյեմբերի 12-ը, մինչև ժամը 17:00** ներկայացվի ԳUSO ծրագրի գրասենյակ, որի հասցեն է.

*Երևան 0009, Տերյան 105/1,
Ցիտադել բիզնես կենտրոն, 204 սենյակ*

Գնառաջարկը պետք է ստորագրված լինի հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, կնքված լինի հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է նշված լինի հայտատու կազմակերպության անվանումը և «**ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումներ**» բառերը:

Ե. Ընտրության սկզբունքը

Ընտրությունը կատարվելու է առաջարկված գնի և որակի հիման վրա: Հաշվի է առնվելու նաև պատվերի կատարման համար առաջարկված ժամանակահատվածը, ինչպես նաև ներկայացված տեղեկությունների հավաստիությունը :

Զ. Պարտավորությունների շրջանակների հստակեցում

Սույն հրավերի հրապարակումը ապրանքների և ծառայությունների մատակարարման պատվեր տալու որևէ պարտավորություն չի դնում ԳԱՏՕ ծրագրի կամ Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերության վրա: Ավելին, ԳԱՏՕ ծրագրի գրասենյակն ու Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա ընկերությունն իրավունք են վերապահում մերժել բոլոր ներկայացված հայտերը: